


Ungarnische

Luftschiffahrt in Ungarn

891.99
S - 57

1914



21 15 1351
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
(ՄԵՆՈՒՀԻ)

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



Թ Ի Ֆ Լ Ի Զ
Յաւրան Ն. Աղանեանի Պոլից. 7
1914

891.99
S-57

~~6 NOV 2011~~

(ሆቴሪበትኒ)

S-57

42

THE

$$\begin{array}{r} 9214 \\ \hline 1001 \end{array}$$


၁၈၆၂

Տպարան Ն. Աղանեանի Պոլից. 7

1914

22 .08. 2013

58.806

Ե Ղ Բ Օ Ր Ս

Ա Ն Մ Ո Ռ Ա Յ

Յ Ի Չ Ա Տ Ա Կ Ի Ն

ՀՈԳԻՍ

Հոգիս—զուլալ աղբիւր վճիտ
 Ծարաւ, պապակ սրտեր շատ. |
 Հոգիս—մի ծառ սաղարթախիտ
 Յոգնանձ,—բեկանձ սրտեր շատ:

Ու բոլորին հով զով—ցօղով
 Նա կ'ցօղէ գթօրէն,
 Եւ բոլորին հով ստւերով
 Կը փայփայէ մեղմօրէն:

8/7 ④ 8 abab

ԱՆՈՒՇ ԵՂԲԱՅՐՆԵՐ...

Անուշ եղբայրներ, ինձ մեղմ շոյեցէք
 Ձեր հրուտ, հսկարտ հայեացքով անշէջ,
 Ձինջ երազներում ինձ ողջունեցէք,
 Սէր, ցնորք, կարօտ, թաղեցէք իմ մէջ:

Ձեր լուռ տանջանքի բոցն եմ ես սիրում,
 Տարօրէն անհուն հայեացքը ձեր ծով
 Ինչ որ յաւերժ է, ինչ որ չի մեռնում...
 Ես մի նուրբ թիթեռ լուսեղէն հոգով:

5-5 ④ 8 abab

ՀՈԳԻ, ՀՈԳԻ ԼԻՆԷԻ...

Հոգի, հոգի լինէի,
 Անձև, աննիւթ, անմարմին,
 Բայց ապրէի, ձուլւէի
 Սիրող, երգող սրտերին:

Եւ անվախճան մի սիրով
 Փայփայէի մեղմագին,
 Անմահների օրօրով
 Օրօրէի ամենքին:

4-3 ④ 8 abab

Ո՞Վ ԵՍ ԴՈՒ...

Ո՞Վ ես դու, որ ունես գուրգուրանք,
 Ո՞Վ ես դու, որ գիտես օրօրել:
 Թէ դու կաս, դու միայն սփոփանք,
 Սէր — յոյգեր ինձ կարող ես բերել:

Դու կ'գաս, դու կ'ասես ինձ նանիկ,
 Որ անուշ ու մեղմոյշ մրափեմ.
 Մոռացւեմ երազով երջանիկ,
 Ձխոկամ, չ'իշեմ, չ'արտասուեմ:

9, "3" (4) 8 abab

ՍԻՐԻՐ ԻՆՁ ԱՆԴԱՐՁ...

Սիրիւր ինձ անդարձ երազի նման,
 Ջեփիւռի նման, որ փարէ, կանցնի.
 Խուլ հեկեկացող նւագի նման,
 Որ մեղմ թախիծով սիրտդ կ'լցնի:

Ձեմ սիրում ես խենթ զգւանք ու համբոյր
 Տարփանքի թափը միշտ նիւթին կապւած.
 Անզուսպ վայելքից, լուռ, անհրապոյր,
 Մեռնում է սէրը դեռ երբէք չապրած:

Երազն է սիրուն, անուրջը անուշ,
 Թախիծը սիրոյ, ցաւը տենչանքի,
 Անյագ գորովի կարօտը քնքոյշ,
 Որ բոյր է տալիս մեր անբոյր կեանքին:

Սիրիւր ինձ անդարձ երազի նման
 Ջեփիւռի նման, որ փարէ, կանցնի,
 Խուլ հեկեկացող նւագի նման
 Որ մեղմ թախիծով սիրտդ կ'լցնի:

5-5 (4) 16 abab

Ո՞Վ ԵՍ ԴՈՒ...

Ո՞վ ես դու, որ ունեսս գուրգուրանք,
 Ո՞վ ես դու, որ գիտես օրօրել:
 Թէ դու կաս, դու միայն սփոփանք,
 Սէր — յոյգեր ինձ կարող ես բերել:

Դու կ'զաս, դու կ'ասես ինձ նանիկ,
 Որ անուշ ու մեղմոյշ մրափեմ.
 Մոռացւեմ երազով երջանիկ,
 Չխոկամ, չ'յիշեմ, չ'արտասուեմ:

ՍԻՐԻՐ ԻՆՁ ԱՆԴԱՐՁ...

Սիրիւր ինձ անդարձ երազի նման,
 Ջեփիւռի նման, որ փարէ, կանցնի.
 Խուլ հեկեկացող նւագի նման,
 Որ մեղմ թախիծով սիրտդ կ'լցնի:

Չեմ սիրում ես խենթ զգւանք ու համբոյր
 Տարփանքի թափը միշտ նիւթին կապւած.
 Անգուսպ վայելքից, լուռ, անհրապոյր,
 Մեռնում է սէրը դեռ երբէք չապրած:

Երազն է սիրուն, անուրջը անուշ,
 Թախիծը սիրոյ, ցաւը տենչանքի,
 Անյագ գորովի կարօտը քնքոյշ,
 Որ բոյր է տալիս մեր անբոյր կեանքին:

Սիրիւր ինձ անդարձ երազի նման
 Ջեփիւռի նման, որ փարէ, կանցնի,
 Խուլ հեկեկացող նւագի նման
 Որ մեղմ թախիծով սիրտդ կ'լցնի:

ԴՈՒ ՄԻ ՎԱՐԴ ԵՍ ՆՈՒՐԲ...

Դու մի վարդ ես նուրբ, սրտումս փթթած,
 Թերթերդ կարմիր արիւնէս բոսոր,
 Ծիւերդ քնքոյշ փարւած են, ձուլւած,
 Սիրոյս թելերին ոլոր ու մոլոր:

Նւ բոյրիցդ խենթ պայծառ, լուսավառ,
 Գարունս եմ օրհնում, գարունս արև-օր
 Դու իմ սէր-ծաղիկ, ծիւերդ ոլոր
 Թերթերդ կարմիր արիւնէս բոսոր:

ԴՈՒ ՄԻ ԱՐԵԻ...

Կեանքս անբիծ մի երազ էր նրբաշող,
 — Անամպ երկինք, պայծառ այգի առաւօտ,
 Զ'ունէր արցունք, չ'ունէր յուշեր սիրտ մաշող,
 Կեանքս անբիծ մի երազ էր նրբաշող:

Ու մի արև երազիս մէջ դու եկար,
 Շառագունեց հորիզոնը իմ այգի.
 Ու մի արև դու շողացիր ու հանգար.
 Հիմա անյոյս կեանքս մուլթ է ու խաւար:

ՀՈՎԻ ԹԵՒԻ ՀԵՏ...

Հովի թևի հետ,
 Հովի թևի հետ,
 Ե՛կ, իմ սէր կարօտ,
 Իմ ցնորք աղօտ:

Բոյրի հմայքով,
 Բոյրի հմայքով,
 Հոգիս օրօրիւ,
 Անուշ պարուրիւ:

ԵՍ ԱՂՕԹՈՒՄ ԵՄ ՆՈՐԷՆ ՈՒ ՆՈՐԷՆ...

Ու ղողանջները անյոյս խաւարում
 Մեղմ հեկեկում են գունատ, թախծօրէն,
 Մինչ ես ծնկաչոք կեանքիս տաճարում
 Դեռ աղօթում եմ նորէն ու նորէն:

Ես աղօթում եմ կեանքիս տաճարում,
 Երբ ղողանջները հալւում են կամաց
 Հոգեվարքի մէջ մեռնող խաւարում
 Դեռ հաւատում եմ, աղօթում անլաց...

ԿԱՐՈՏ:

✓ Երբ կամաց դալկահար հեռաստանն է մթնում,
Մռայլում է մէզում դաշտ ու սար,
Ինձ թւում է հեռւում մէկը ինձ է տենչում,
Մինչև լոյս աղօթում ինձ համար:

✓ Մէկն անուշ օրօրում, փայփայում է խոնարհ
Գուրգուրում, գուրգուրում մեղմաբար,
✓ Կարօտի հեղեղում օրւայ պէս դալկահար
Մենք հալւում ու ձուլւում ենք իրար:

ԱՇԽԱՐՀՆ ԱՅՍՕՐ...

Աշխարհն այսօր խորունկ է ու լայն,
Հրդեհած եմ ես աւիւնով կեանքի,
«Ողջը հաճոյք է», երգում է մի ձայն,
Փոթորկում հոգիս թափով տենչանքի:

4176 Ուզում եմ կեանքէն մի համբոյր քաղել,
Ու տանել նւէր վեհ բարձունքներին,
Ուզում եմ վիշտս առյաւէտ թաղել,
Նմանել ցայտուն, պայծառ աստղերին:

Որքան սիրուն էք անհունի աչքեր,
Որ թարթում էք լուռ նազանքով անծայր,
Մեր սիրտն էլ ունի երկինք ու աստղեր,
Արդեօք երգում էք դուք էլ մեզ համար:



ԱՇՈՒՆ

Անտառը անյոյս կ'ուլայ թախծօրէն,
Աշնան դժգունակ տերեւների տակ.
Սրտիս պէս անյոյզ կուլան մեղմօրէն,
Մէզ-մշուշի տակ սար, ձոր ու ժողով:

Շղարհն է խաւար գրկել դաշտ ու սար,
Աստղերը անթարթ սառել են անկայծ.
Թուփ, տերեւ ու ծառ, ծով, եթեր ու քար,
Մերկացած անդարդ մեռնում են կամայ:

Անտառը անյոյս կուլայ թախծօրէն,
Աշնան դժգունակ տերեւների տակ.
Սրտիս պէս անյոյզ կուլան մեղմօրէն,
Մէզ-մշուշի տակ սար, ձոր ու վտակ:

ՆՈՐԻՑ ՄԻ ԿԱՐՕՏ...

Նորից մի կարօտ, սիրոյ մի թախիծ
Ծանօթ մեղեդին երազ անցեալի
Պարուրեց հոգիս...

Նորից մի համբոյր վաղանցուկ գարնան
Վարդի բուրմունքով
Օրօրեց հոգիս...

ՄԻ ՕՐ ՏԵՍԱՅ...

Մի օր տեսայ խոհուն աչքեր
Մեղամաղձոտ, թախծալի
Երկու խոշոր արցունք ցողեց
Այն աչքերից գլթալի:

Ի՞նչ էր թաղած նրանց խորքում
Ինձ մութ մնաց յաւիտեան
Բայց այն վճիռ կաթիլներում
Ա՛հ, կար ամեն, ամեն բան:

ՄԷԿՆ ԻՆՁ ԱՍԱՑ...

Մէկն ինձ ասաց՝—քո արցունքով
Վերքերս խոր կ'ուզեմ ցողել.
Մէկն ինձ ասաց՝—քո աղօթքով
Մեղքերս բիւր կ'ուզեմ քաւել:

Ու ես լացի, աղօթեցի
Վառ հաւատով լի, ջերմագին,
Աղօթեցի—խոր սիրեցի,
Իմ արցունքով ցողած հողին:

ՄԵՆՔ ՂԱՐԻԲ ԱՆՑՈՐԴ...

Մենք զարիբ անցորդ՝ կեանքի ճամբեքով
 Բեռնաւոր, յոգնած եկանք, որ «անցնենք»:
 Վաղուց մոռացւած հանգստի վայրից
 Ընդ միշտ աքսորւած՝ եկանք, որ «անցնենք»:

Ու պիտի քայլենք քանի ճամբորդ ենք,
 Ապաստան, կայան չկայ մեզ համար.
 Մի օր վաստակած մենք էլ կ'հասնենք
 Տխուր, վշտահար մի օտար աշխարհ...

ՆՈՐԻՑ ՆԻԱԳԻ...

Նորից նւագի անուշ մեղեդին
 Կարօտ, հարազատ
 Հնչեց թախծալի և հոգիս գերի
 Սաւառնեց ազատ:

Երագի գրկում, անձուկի գրկում
 Տխուր խնդացի,
 Անցեալս ու ներկաս նայեցին իրար
 Ու... ափսոսացի...

ԵՐԿԻՐՆ Է ՆԻՐԶՈՒՄ...

Երկիրն է նիրհում վեհ ու անխռով,
 Յաւերժութեան մէջ ծովն է երազում,
 Հոգիս արբած է նորից քո բոյրով,
 Նորից քո անմահ երգն եմ ես լսում:

Երազող երկրի վեհապանձ գրկում
 Յաւերժութիւնն է անվերջ տրոփում,
 Իմ կարօտ սրտի խորունկ ծալքերում
 Սիրոյ-հրմայքի շուշաններ փթթում:

ԹԱԽԻԾ:

Նորից մշուշն է երգում իմ հոգում,
 Թափւում մարգարիտ լուռ վհատումի.
 Ո՞վ է անընդհատ իմ վիշտը հեգնում,
 Ո՞վ է որ տրտունջ-մրմունջներ չ'ունի:

Լուռ հեռաստանում կրակներն հանգան,
 Մութ է և անլոյս հեռաստանն հոգուս.
 Անխառն է, անծէր, խոր ու դիւթական
 Երգն յաւերժութեան ու երգը հոգուս:

Նորից մշուշն է երգում իմ հոգում,
 Թափւում մարգարիտ լուռ վհատումի.
 Ո՞վ է անընդհատ իմ վիշտը հեգնում,
 Ո՞վ է որ տրտունջ-մրմունջներ չ'ունի:

ԳԱՐՆԱՆ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ:

Գարունն աղանջիս սէր է մրմնջում,
 Ո՞վ ես դու ուրին հոգիս է տենչում,
 Գարունը սիրոյ երգեր է հնչում,
 Ո՞վ ես դու, ուրին յուշերս են կանչում:

Դու կաս, դու չկաս ստերների պէս,
 Յուրերն են վառւում, հալւում են նրանք.
 Դու կաս, դու չկաս ծաղիկների պէս,
 Գարունն է անցնում, մեռնում են նրանք:

Գարունն աղանջիս սէր է մրմնջում,
 Ո՞վ ես դու, ուրին յուշերս են կանչում.
 Գարունը սիրոյ երգեր է հնչում,
 Ո՞վ ես դու, ուրին հոգիս է տենչում:

ՅՈՅՍԸ:

Միշտ մի երգ է հնչում
 Աղանջիս, դիւթական.
 Ու կանչում է, կանչում
 Ինձ մի ձայն մոգական:

Եւ թւում է միայն
 Համակած այդ երգով,
 Ես քայլում եմ, ունայն
 Աշխարհի ճամբէքով:

ՏԱՐԷՔ ՀՈՂՄԵՐ...

Տարէք հողմեր, անսանձ հողմեր,
Սիրտս էլ անտուն, անկայուն,
Սիրտս էլ անհէր, սիրտս էլ անմէր
Ձեր վայրերը անանուն:

Ես էլ կուգեմ համբոյր քաղել
Լերկ ժայռերի լանջերից,
Ես էլ կուգեմ արցունք քամել
Հեռու, հեռու ափերից:

Սարերն ընկնիմ, անտառ ու ձոր,
Երգեր հիւսեմ, երգեմ ու լամ
Դաշտերն ընկնիմ ոլոր-մոլոր
Ծառ ու ծաղիկ փետեմ ու լամ:

Տարէք հողմեր, անսանձ հողմեր,
Սիրտս էլ անտուն անկայուն,
Սիրտս էլ անհէր, սիրտս էլ անմէր
Ձեր վայրերը անանուն:

ԱՅՆ ՄԻ ԵՐԱՁ ԷՐ...

Այն մի երազ էր՝
Գարուն, վարդ, սոխակ,
Վարվռուն շողեր,
Երկինք կապուտակ:

Ծանօթ կարկաշը
Մօտիկ աղբիւրի,
Գողարիկ հառաշը
Մեղմիկ զեփիւռի:

Ու երգը ախուր
Երազկոտ ու խոր
Թախծալի երգը
Իմ անուշ աղբօր:

Այն մի երազ էր,
Գարուն, վարդ, սոխակ,
Վարվռուն շողեր,
Երկինք կապուտակ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԻՐՏԸ:

Մի շշուկ դալուկ, մի ժպիտ աղօտ,
 Մի կաթիլ արցունք, մի տերև թռչնած
 Հոգի են առնում, տանջանք ու կարօտ
 Մաշում պօէտի հոգին գիւրադգաց:

Շշուկը՝ պատմում երազ հեքաթներ,
 Ժպիտը՝ երգում սէր, ծաղիկ, դարուն,
 Կաթիլ արցունքը՝ ցողում հին վէրքեր,
 Թռչնած տերևը՝ ողբում ցուրտ աշուն:

ԻՄ ՍԷՐԸ:

Ես էլ, ես էլ ապրեցի,
 Աղօթեցի ջերմագին,
 Ես էլ կեանքը օրհնեցի,
 Անիծեցի վշտագին:

Բայց աղօթքիս վեհ ժամին
 Ես յաւերժը գրկեցի,
 Էհ, թող տանին, թող տանին
 Ինչ որ սրտէս նետեցի:

ԵՐԿԻՆՔԸ ԶԻՆՁ...

Երկինքը ջինջ, արևը վառ էր այնտեղ,
Կեանքիս շէմքին աշխարհը բաղդ ինձ թւաց,
Ճշմարտութեան երգը հնչեց ամեն տեղ,
Սիրաս զիւթւած մեծ հաճոյքից հեկեկաց:

Արտասուալից ժպիտը ջինջ աչերիս,
Կեանքի առջև աղօթեցի ջերմագին.
Եւ ուխտեցի կեանքի ուղին անցնելիս
Ճշմարտութիւն շնչէ, բուրէ իմ հոգին:

Անցան օրեր, տարիները դժգունակ
Տերևի պէս թառամեցին վայր ընկան,
Աղօթքիս հետ ես մնացի մէն-մենակ,
Ջերմ հաւատիս արցունքները էլ չկան:

Ինչի առջև հոգիս ջահեր էր վառում,
Հիմա չունի ոգևորող ոչ մի կայծ.
Ինչ կուսական և երկնային էր թւում՝
Անգթօրէն անարգւած է ու պղծւած:

Անմեղ, անգին լոյս երազներ անցեալի
Եկէք նորից լուսավառէք իմ հոգին.
Հիւսէք յոյգեր նւիրական, բաղձալի...
Երազողը միշտ կարօտ է երկնքին:

ՀՈԳԻՍ ՎԱՅԵԼԵՑ...

Հոգիս վայելեց
Մի գողարիկ համբոյր՝
Հովերից անուշ,
Զովերից անուշ.—
Այն քո հայեացքն էր
Կենսատու մի բոյր
Նւիրեց սրտիս,
Գարունից անուշ:

Սիրտս օրօրեց
Մի թախիժ ծանօթ,
Մի երազ—կարօտ
Մի յուշիկ աղօտ.—
Այն քո հոգին էր
Թևերը փռած՝
Փարեց, գուրգուրեց
Հոգիս տխրամած:

ՄԻՇՏ ԶԳՈՒՄ ԵՄ ԵՍ...

Միշտ զգում եմ ես, որ հոգուս խորքում
Մի տաճար ունեմ շողուն, լուսավառ,
Ցայտուն աստղերի նման երկնքում,
Այնտեղ ամեն ինչ, ջինջ է ու պայծառ:

Իմ խիղճը չունի ոչ մի խաւար կէտ,
Եւ ոչ մի տարտամ սուէր երերուն.
Տանջանքի ցաւից հիւսւած նրբակերտ,
Վեհ աւերակ է իմ կեանքը սիրուն:

ԾՈՎՆ ԷԼ ԻՆՁ ԵԹԵՐ:

Վեհ բարձունքներէ բարձունք սրնթաց
Արծիւն էր անցնում, արքան թեաւոր.
Ներքե ծովափին յոգնած ու բեկւած
Մարդն էր տառապում անյոյս վիրաւոր:

Ու չըհանդուրժեց ազատ մտքերի,
Անսանձ մտքերի արքան թեաւորի,
Անսահման հոգով մնալ միշտ գերի,
Արծիւ մտքերով լինել միշտ ստրուկ:

— «Ծովն էլ ինձ եթեր, խոր ու կապուտակ.»
Առաց ու նետուց գիրկը ջրերի,
Մինչ բարձունքներում ազատ, համարձակ,
Արծիւն էր ճախրում, արքան լեռների:

ԻՄ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Երանգների մի աշխարհ կար ոսկեվառ,
Այն աշխարհում սիրտս կեանքով տրոփեց,
Այն աշխարհում մէկն ինձ ասաց, «քեզ համար
Հորիզոնը շառագունեց ու վառեց»:

«Արևի հետ աշխարհ եկար իմ մանկիկ»,
Մայրս անուշ զուրկուրում էր ու երգում,
«Արևի պէս դու կ'լինես երջանիկ,
Զը նախանձես երանգներին երկնքում»:

Ու ես մանկիկ սիրուն, աշխոյժ, կենսալի,
Թիթեռնիկի նման կեանքը սիրեցի...
Կարճատև էր իմ դրախտը անցեալի,
Մօրս երգին կարօտեցի ու լացի...

Երանգների մի աշխարհ կար ոսկեվառ,
Այն աշխարհում սիրտս կեանքով տրոփեց,
Այն աշխարհում մէկն ինձ ասաց, «քեզ համար
Հորիզոնը շառագունեց ու վառեց»:

ՄՈՌԱՑՈՒՄԻ ԵՐԳԵՐԻՑ:

Միշտ գարուն, միշտ գարուն,
— Միշտ ծաղիկ, երգ ու սէր,
Երազկոտ ու սիրուն
Հեքիաթներ, հեքիաթներ...

Ես ապրել եմ ուզում,
Ես արբել եմ ուզում,
Միշտ գարուն, միշտ գարուն,
Միշտ ծաղիկ երգ ու սէր:

Ցուրտ աշնան գունատւած
Տերեւին թառամած,
Էլ չը կայ վերադարձ,
Էլ չը կայ վերադարձ:

Միշտ կաթող, կաթկաթող
Անձրեին սև ու սուգ.
Զի պակսիլ սիրտ մաշող
Արտասուք, արտասուք:

Միշտ դարուն, միշտ դարուն,
Միշտ ծաղիկ, երգ ու սէր,
Երազկոտ ու սիրուն
Հեքիաթներ, հեքիաթներ...

Ո՞վ ես ԱՍԱ...

Ո՞վ ես, ասա, որ կանչում ես,
Ինձ քո գիրկը սև մեղքի,
Ունի՞ հոգիդ նրբութիւնը
Յողի, բոյրի, աղօթքի:

Գիտե՞ս սիրել՝ գիտե՞ս երգել,
Գիթալ, դիթալ ու գիթալ,
Մանկան հման քո հոգին էլ,
Կարո՞ղ է լալ ու ժպտալ:

Քո սրտումն էլ յաջորդում են
Անձրե, արե, ծիածան,
Քեզ էլ անվերջ օրօրում են
Տարերքը խենթ բնութեան...

Ես գալիս եմ հպարտ ու հեզ,
 Ճշմարտութեան վայրերից.
 Անշէջ հուրը բերում եմ քեզ
 Սրտիս խորունկ ծալքերից:

Ես գալիս եմ եթերային
 Երազների աշխարհից,
 Պարզիր թևերդ ու երկնային,
 Յնորժներով գրկիր ինձ:

ՄԱՀԻ ՀԱՆԴԷՊ:

Ո՞ր հովտում, ո՞ր դալար մարգերում,
 Ո՞ր թաւոտ ծառերի հովի տակ,
 Ո՞ր շողուն ջրերի ափերում,
 Քեզ փնտրեմ յուսաբեկ ու մենակ:

Ձայնս թոյլ է, անզօր և օտար
 Բնութեան համերգում վեհասքանչ.
 Թէ կանչեմ կըհեզեն դաշտ ու սար...
 Քեզ էլ հետ չի բերի ոչ մի կանչ:

Դու չկաս. դու այն համր, անձայն,
 Հռակեաց վայրերումն ես քնած,
 Ուր կարօտն ու իղձերն են ունայն,
 Ուր հարցի պատասխանն է լռած:

Ո՞ր հովտում, ո՞ր դալար մարգերում,
 Ո՞ր թաւոտ ծառերի հովի տակ,
 Ո՞ր շողուն ջրերի ափերում,
 Քեզ փնտրեմ յուսաբեկ ու մենակ:

† ՍԻՐՏԱ ԽՈՆԱՐՀ, ՇՈԳԻՍ ԽՌՈՎ...

Սիրտս խոնարհ, հոգիս խռով առյաւելտ,
Անցւոր ախպէր, քեզ միշտ օտար կ'մնամ.
Չ'կայ հիմա դարձի ոչ մի արահետ,
Էլ մի կանչիր, թող չ'յիշեմ, հեռանամ:

Վերջին աղօթքս մըմնջամ ու անցնեմ,
Ջինջ հեքեաթիս հովիտներով սիրավառ.
Մեղմ աղօթքով սրտիս դատարկը լցնեմ,
Թող բախտը նոր լոյսեր վառէ քեզ համար:

Ինձ մի կանչիր, ես հեռու եմ և օտար,
Հեռու բախտի պատրանքներից երերուն.
Իմ վեհ հոգում տարածւում է նոր աշխարհ,
Հպարտ հոգիս զօրգորում է նոր դարուն:

—Մենութիւնս դահ եմ արել ինձ համար,
Հոգիս՝ երկինք, սիրտս՝ արև ոսկէհօւր.
Բաց սրտումս կեանքն է երգում մշտավառ,
Էլ մի կանչիր, էլ մի փնտրիր ինձ իզուր:

† ԽՈՐՏԱԿԻԱԾ ՍԵՐ

Սև ու լայն անդունդի ափերին,
Դէմ-դիմաց մենակեաց ու լռին,
Եւ ծանօթ, և կարօտ ու օտար,
Երկու հեզ ծաղիկներ կային վառ:

Ու զեփիւռը անուշ մեղեդով,
Ափից-ափ երջաններ էր հիւսում,
Մեղունները անձէր կարօտով,
Սիրոյ խօսք, սիրոյ երգ փսփսում:

Սև ու լայն անդունդի ափերին
Երկու հեզ ծաղիկներ կային վառ.
Ու հիմա մատնւած հողմերին
Անդնդում լուռ փարւել են իրար:

ՅԱԻԻՑ ԱՆՋՈՐ...

Յաւից անգօր, գլուխդ անճար
Մարդի կրծքին մի դիր երբէք.
Եւ մի պարզիր սիրտդ հազար
Խոցերով լի երբէք, երբէք:

Պատմիր ցաւդ քարին, ջրին,
Մնա մենակ, յամառ ու լուռ,
Երգդ հիւսիւ խենթ հողմերին,
Մարդի կրծքին մի լար իզուր:

ՍԻՐՈՒՄ ԵՄ ԵՐԲ ՆԱՏՈՒՄ ԵՍ ԻՆՁ ՄՕՏ...

Սիրում եմ, երբ նստում ես ինձ մօտ
Եղբօր պէս հարազատ, մեղմ ու հեղ,
Մոռանում եմ յուշերս ցաւոտ,
Կարկաչները հոսում են սրտէս.

Կարկաչները հոսում են սրտէս
Սիրուս պարզ աղբիւրները կայտառ.
Անըջանքն է երգում սիրակէզ,
Հովիտներն են փթթում ծաղկավառ:

Երբ պարզում ես ձեռքերդ քնքոյշ
Եղբօր պէս փայփայում ես անշար,
Ողջ աշխարհը դառնում է մի յուշ,
Մի աղօթք ջերմ խորունկ ու անբառ:

Միշտ այդպէս, միշտ այդպէս մեղմ ու հեղ
Փայփայիլ, պարուրիլ իմ հողին,
Թող անվերջ, անվախճան սիրեմ քեզ
Իմ ընկեր, իմ ցնորք անմեկին:

ՅԱԻԻՑ ԱՆՁՕՐ...

Յաւից անգօր, գլուխդ անճար
Մարդի կրծքին մի դիր երբէք.
Եւ մի պարզիր սիրտդ հազար
Խոցերով լի երբէք, երբէք:

Պատմիր ցաւդ քարին, ջրին,
Մնա մենակ, յամառ ու լուռ,
Երգդ հիւսիւ խենթ հողմերին,
Մարդի կրծքին մի լար իզուր:

ՍԻՐՈՒՄ ԵՄ ԵՐԲ ՆԱՏՈՒՄ ԵՍ ԻՆՁ ՄՕՏ...

Սիրում եմ, երբ նստում ես ինձ մօտ
Եղբօր պէս հարազատ, մեղմ ու հեղ,
Մոռանում եմ յուշերս ցաւոտ,
Կարկաչները հոսում են սրտէս.

Կարկաչները հոսում են սրտէս
Սիրուս պարզ աղբիւրները կայտառ.
Անըջանքն է երգում սիրակէզ,
Հովիտներն են փթթում ծաղկավառ:

Երբ պարզում ես ձեռքերդ քնքոյշ
Եղբօր պէս փայփայում ես անշար,
Ողջ աշխարհը դառնում է մի յուշ,
Մի աղօթք ջերմ խորունկ ու անբառ:

Միշտ այդպէս, միշտ այդպէս մեղմ ու հեղ
Փայփայիր, պարուրիր իմ հոգին,
Թող անվերջ, անվախճան սիրեմ քեզ
Իմ ընկեր, իմ ցնորք անմեկին:

ԻՆՁ ՄԻ ՀԱՐՑՆԷՔ...

Ինձ մի հարցնէք սիրել եմ թէ ոչ,
 Սրտիս անթափանց, մոլթ անդունդներում,
 Լուռ օրօրւում են յուշերս դողդոջ,
 Ու կեանքը էլ ինձ ոչինչ չի բերում:

Կար մի առաւօտ. մեղմ լուսաբացին,
 Քնոթիւնն ու ես գրկեցինք իրար.
 Անտառ ու առու ինձ հետ խօսեցին,
 Ու սրտիս խորքում վառւեց նոր աշխարհ:

— Դարերը վայրկեան, վայրկեանը դար էր,
 Բարձունքը մօտիկ, աստղերն հարազատ,
 Կեանքը հաճոյքի ճանապարհ անժէր,
 Սիրտս ու հոգիս թևաւոր, ազնւո:

Բայց առաւօտ էր... արեւը թեքւեց,
 Լուռ շառագունեց, մթնեց, սևացաւ,
 Խաւար ու անյոյս գիշերը տիրեց,
 Ու վառ աշխարհս մի երազ դարձաւ:

Ինձ մի հարցնէք սիրել եմ թէ ոչ,
 Սրտիս անթափանց, մոլթ անդունդներում,
 Լուռ օրօրւում են յուշերս դողդոջ
 Ու կեանքն էլ ինձ ոչինչ չի բերում:

ՅՈՒՇԵՐ ՄԻԱՅՆ...

Յուշեր միայն
— Ուրականներ անցեալից
Այցի կուգան
Հին երազներս յստակ:

Ո՛րքան կարօտ,
Ո՛րքան տանջանք ու թախիծ
Հոռւ տազնապել,
Փոթորկւել են կրծքիս տակ:

ՄԻ՝ ԹՈՒՆԱԿՈՐԻՐ...

Մի թունաւորիւր ախուր անջատման
Հոռւ վարկեաններս.
Թո՛ղ անվերջ հոսեն անդարձ խենթութեան
Ձինջ արցունքներս.

Ի՜նձ մի անիծիր. թո՛ղ. մնաս բարև.
Թող լուռ հեռանամ.

Ձէ՛ որ իմ սրտում էլ չ'կայ արև,
Թող քեզ մոռանամ:

Քեզ էլ չեմ սիրում, քեզ էլ չեմ սիրում,
Տանջանքս է վկայ.

Տանջանքից բացի հիմա իմ սրտում
Էլ ոչինչ չկայ...

Բայց դո՛ւ չես խաբւած, այդ ես եմ խաբւած
Իմ խենթ յոյգերով,

Իմ ցնորք կեանքի լոյսերից հիւսած
Սուտ երազներով...

Քեզ չեմ կորցնում, անդարձ տենչերիս
 Թաղումն եմ սգում,
 Եթերանման ջինջ երազներիս կորուստը
 Տրտում.
 Չէ որ իմ սրտում այլ ծաղիկներ էր
 Ծաղկում ու բուրում,
 Մի այլ աշխարհի բոյրն ու հմայքն էր
 Հոգիս քեզ բերում.
 Քեզ չեմ կորցնում, թէև լուռ, անյոյս
 Լալիս եմ ահա.
 Թո՛ղ. մնաս բարև. մենակ, տարագիր,
 Աղքատ եմ հիմա:

ԱՆԾԱՆՈԹ ԱԽՊԷՐ...

Անծանօթ ախպէր, թո՛ղ վերքդ կապեմ,
 Հեռւիցն ես դալիս բեկւած ես, օտար,
 Ո՞վ էլ որ լինես, ես կ'փարատեմ
 Թախիծդ անյոյս ու ցաւդ անճար:

Թո՛ղ վերքդ կապեմ, գուրգուրեմ, գլթամ,
 Ճակատդ սրբեմ մեծ ճամբից յոգնած.
 Ով էլ որ լինես, քեզ այցի կը գամ,
 Անծանօթ ախպէր, քոյրդ եմ տառապած:

ՄԵՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐԻՑ՝

Նորից ձեր երգն է հնչում իմ հոգում
 — Մենութեան անհաս իղձեր անպատում,
 Թողած սէր-յուշեր ու տանջանքը հեզ,
 Հոգիս թռչում է նորից դէպի ձեզ:

Սիրոյ օրօրը, հմայքը մեղմոյշ
 — Գարուն ու ծաղիկ սիրուն են, անուշ,
 Բայց վեհ են, խորունկ, անտակ ու անծիր
 Մենութեան, վայրի տենչերը կարմիր:

— Մենակ ու ազատ թափառել, խոկալ,
 Ընկերել ջրին, քարին, տերեւին.
 Երկնքի առաջ ողջ սիրտդ բանալ,
 Սիրով ողջունել թարթող աստղերին:

ՏՈՒՐ, ԱՆՑԻՐ, ՄՈՌԱՑԻՐ...

Ամեն ինչ տո՛ւր, անցի՛ր, մոռացի՛ր՝
 Զուր յոյգեր, զուր կարօտ՝ ցնորքներ...
 Ո՞վ հիւսեց, որ չեղան ցան ու ցիւր
 Ա՛խ, անուշ, ջինջ անուշ-երազներ:

Ո՞ւմ սրտում ջերմ արևը գարնան
 Զհանգաւ, չհագաւ մէգ-մշուշ,
 Ում հոգին ցուրտ պատանը ձմրան
 Զգրկեց, չսպտեց սէր ու յուշ:

Տո՛ւր անվերջ, տո՛ւր, անցի՛ր, մոռացի՛ր
 Զուր յոյգեր, զուր կարօտ՝ ցնորքներ...
 Ո՞վ հիւսեց, որ չեղան ցան ու ցիւր
 Ա՛խ, անուշ, ջինջ-անուշ երազներ:

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳԸ:

Նանա, բալիկս, նանա,
 Նանա խաղաղ ու անուշ.
 Գիտեմ պիտի մոռանայ
 Քեզ հանգիստը վաղ թէ ուշ.
 Նանա, բալիկս, նանա,
 Նանա խաղաղ ու անուշ:

Օրօր կասեմ քեզ անդորր,
 Օրօր, օրօր քեզ շատ օր,
 Քնիր անհոգ, անտարբեր,
 Շատ են անքուն գիշերներ.
 Օրօր կասեմ քեզ անդորր,
 Օրօր, օրօր, քեզ շատ օր:

Կեանքը դառն է վշտալի,
 Օրօր, նանիկ չես լսի,
 Նանիկն անուշ իմ բալի
 Ոչ ոք ինձ պէս չի ասի.
 Նանա, բալիկս, նանա,
 Կեանքում նանիկ չես լսի:

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ:

Ծաղրեր դու միայն, ծաղրեր թունալից,
 Հեղինի սէր, ժպիտ, իղձ, կարօտ, թախիժ.
 Դիւային քրքիջ արձակիւր կոպիտ
 Խելագարի պէս հռհռն անմիտ:

— Տես, վարդն ու շուշան երգում են անուշ,
 Արևի փայլին ժպտում մեղմօրէն...
 Իսկ այն սև ամպը... Հէ՞ որ վաղ թէ ուշ,
 Գոռ փոթորիկ է թափելու վերէն:

ՎԻՐԱԻՈՐ ԵՂՆԻԿ...

Վիրաւոր եղնիկ... սարերն է ընկել,
 Ցաւիցը մըմուռ վազում է մոլոր,
 Չար նետը սրտին մօտիկ է դիպել,
 Զօլերն է ընկել, վազում է մոլոր:

Տունը կորցըրած, ցաւի հետ խելառ,
 Վազում է հեռու ճամբէքով օտար,
 Էն օտար ճամբին կընկնի, կ'մնայ,
 Ո՞վ էրւած սրտի ցաւը կիմանայ...

ԹՈՂ ԱԽՊԷՐ...

Թո՛ղ ախպէր, մոռացի՛ր ինձ, գնա՛,
 Լոյս հոգիդ խաւարին մի՛ մատնիր,
 Իմ սրտում ուր աւեր է հիմա,
 Քեզ հանգիստ, հանգրւան մի՛ փնտրիր:

Լոյս ու յոյս կ'մթնեն իմ գրկում,
 Մէջ-յոյգեր կ'ցնդեն ինչպէս բոյր.
 Եւ ինչպէս նւագի հեկեկում՝
 Քո սրտում կ'մնայ պաղ համբոյր:

Ես գիտեմ տրտունջները ունայն,
 Իմ սրտում վառ օրւայ չկայ շող.
 Ու վաղուց անուրջներս դարնան
 Օրօրւում են մէգում սիրտ-մաշող:

Թո՛ղ ախպէր, մոռացի՛ր ինձ, գնա՛,
 Լոյս հոգիդ խաւարին մի՛ մատնիր.
 Իմ սրտում, ուր աւեր է հիմա,
 Քեզ հանգիստ, հանգրւան մի՛ փնտրիր:

ՄԱՀԻ ՕՐՕՐԸ:

Պառաւ վհուկն անընդհատ,
 Օրօրում է ու երգում.
 Մեծանում է շողազարդ
 Կեանքը լուսէ օրրանում:

Կախարդական աշխարհում,
 Մանուկ կեանքը արև-օր,
 Երազում է, փայփայում
 Գալիք բախտը հեռաւոր:

Ու փուռում են ծաղկազարդ
 Հովիտները հմայուն —
 Տարածւում են միշտ անհարթ
 Ուղիները անկայուն:

Յնորք, կարօտ, սէր ու տենչ,
 Խենթ պարերգում բռնւած,
 Պտուտում են ու անվերջ
 Նոյն երգով են հմայւած:

Հէյ, երգում են դար ու օր,
 Ժամ ու տարի, ակնթարթ...
 Պառաւ վհուկն ամեն օր
 Օրօրում է անընդհատ...

ԽԵԼԱԳԱՐԸ

Յիշում ես այնտեղ, այն գետի ափին,
 Իմ հարսանիքն էր... լալիս էի ես...
 Բայց ես խնդացի. սոխակը վարդին
 Կարօտ էր այնպէս... Դու հեկեկում ես...

Վաղուց է դարնան չ'կան ծաղիկներ,
 Մէկը բացւել է գրքիս էջերում,
 Նա երջանիկ է, մենակ, անընկեր...
 Տես մէկն էլ, մէկն էլ քո ջինջ աչերում:

Թո՛ղ քաղեմ նրան, թո՛ղ իմ սիրունիկ,
 Գիտեմ անդունդի ափին է բուսել.
 Մայրիկ ջան, մայրիկ, իմ անուշ մայրիկ,
 Դու որ աղօթես՝ չեմ ընկնի ես էլ...

Ինչո՞ւ ես ժպտում եմ վարդ ունէի...
 Ծովի խորքերում էլ չեն աղօթում...
 Ա՛հ, քո աչքերից արիւն է կաթում,
 Ես էլ խմեցի այդ կարմիր գինուց...

Այնտեղ, յիշում ես, այն գետի ափին...
 Իմ հարսանիքն էր... հովի թեւերուց
 Համբոյր ուղեցի, մռայլեց արփին...
 Դու չէիր պարում, յիշում ես, անուշ
 Սոխակն էր լալիս փշերից խոցւած,
 Այն գետի ափին, շուշանը քնքոյշ
 Կարապի երգից լալիս էր կամաց...

ԷԼ ՄԻ ԱՓՍՈՍԱՅ...

Էլ մի ափսոսա. թո՛ղ որ հանդարտի
 Մեռնող կրծքիս տակ ցաւը կարօտի.
 Թո՛ղ քեզ ինձ բերող ճամբէքը բոլոր
 Տատասկը սլատի, թո՛ղ լինես՝ մոլոր:

Էլ չեմ հաւատում սիրոյ պատրանքին.
 Վշտի հովիտ է սէրդ անմեկին.
 Իմ սրտում հանգաւ շողը արևի,
 Թախծում է հոգիս խորքում անձաւի:

Գնա՛, թափառիր վայրերում օտար,
 Որոնիր նոր բախտ, նոր սէր, նոր աշխարհ...
 Ու երբ կը լինես հեռու և լքւած,
 Թափառումներից յոգնած ու բեկւած,

Գիտեմ պիտ հիւսես մի երազ յստակ,
 Իմ ցնորք կեանքի յոյսերից խորտակ,
 Ու պիտի կանչես և փնտրես տաքտամ
 Վաղուց մոռացւած ուղիներն իմ տան:

ԳԻՇԵՐԻ ԵՐԳԸ:

Գիշերն է նիրհում անհուն երազով,
 Ննջող աշխարհի հեքն եմ ես լսում,
 Կարծես հնչում է մի երգ հոգեթով՝
 Յաւերժն է խօսում...

Կարծես պատմում են մեռած, մոռացւած,
 Վեհ հոգիների անուրջօրերից,
 Որ կեանքից լքւած, բախտից հալածւած՝,
 Չ'ապրեցին նորից:

Լսում եմ անա դաշնակներ թախծոտ,
 Անհատնում յոյսի հնչիւններ զւարթ...
 Եւ որքան տանջանք, և որքան կարօտ
 Տանում ես, ով մարդ:

Տօր, մի վհատիր, ծով սիրտդ պարզիր,
 Տեսչա՛, տառապիր, անսահման զթա՛,
 Սիրիր ինչ ունես, ցաւիդ աղօթիր՝
 Ու դարձեալ ժպտա՛...

Բ Ե Շ Տ Ա Ո Ւ

Լ Է Գ Է Ն Գ

Կովկասեան վայրի ձոր ու դաշտերում,
 Հորիզոնների փրուզեայ հեռում,
 Ուր ամեն մի ժայռ խիզախ, հուանի,
 Կարծես բարկութեան կ'երաւածք լինի,

Հին-հին օրերից, դարերից ի վեր,
 Միշտ լուռ, անբարբառ բախտի վկաներ,
 Երեք վեհ սարեր շուրջ-պարի բռնած,
 Լռին խորհում են իրարու զիմաց:

Բեշտաուն* հինգճեղ զագաթը պարզած,
 Կապոյտ մշուշում, երազով տարւած,
 Յիշում է անդարձ ջահել օրերը,
 Սիրուն Մաշուկին՝ իր բախտն ու սէրը:

* Բեշտաուն-նողայերէն նշանակում է հինգ գագաթ, հինգ սար, հիւսիսային Կովկասի լեռներից մէկն է:

Ու նրա գլխաց տխուր, մենաւոր,
Կանաչ գլուխը խոնարհած անդօր,
Մաշուկն* է շնչում խիտ անտառներով,
Չար բախտն անխիժում հողմերի բերնով:

Իսկ այնտեղ հեռում հպարտ, անվրդով,
Եալբուզն** է խորհում մահաշունչ հոգով
— Հսկայ էլբրուսը, խիզախ, ալեգարդ,
Որին չ'շարժեց ոչ աղերս, ոչ դարդ:

Անցած օրերից կայ տխուր աւանդ,
Թէ Եալբուզ սարը— մի ծերուկ անյաղթ,
Ինչպէս կործանեց խենթ սիրող սրտեր
Ու դարձեալ անհոգ մնաց անտարբեր:

* Մաշուկ նոյնպէս հիւսիսային Կովկասի լեռներից է:

** Եալբուզ կամ էլբրուս, որ նշանակում է սառցէ լանջ, Կովկասեան լեռնաշղթայի զապաթներից մէկն է և գտնւում է Մաշուկի ու Բեշտաուի գլխաց:

Դաշտերի վայրի աղջիկ էր հպարտ,
Մազերը արձակ, Մաշուկը զւարթ
Անձրևների տակ դէմքը լանում,
Կիզիչ արևի լուսով տաքանում:

Մեղմ լուսաբացից մինչև վառ աստղեր,
Շնչում էր բոյր, հով, հիւսում երազներ,
Լուռ գիշերներին օրօրում կամաց,
Բեշտաու քաջի խենթ սիրով արբած:

Բայց սէրը— կախարդ,
Ինչպէս փշոտ վարդ,
Միշտ բոյր է բերել,
Փշերով գերել:

Մի օր, երբ արփին շողքերով հազար
 Լուսավառել էր անտառ, ձոր ու սար,
 Մաշուկն հերարձակ դաշտերում մենակ,
 Երգով հիւսում էր ծաղիկէ մանեակ,
 Որ երանգներով կուրծքը զարդարէ,
 Սիրած տղային նոր հմայք բերէ.
 Յանկարծ նրա դէմ կնճռոտ, ալեզարդ
 Եալբուզն է ելնում՝ ծերունին հպարտ,
 Եւ մահագուշակ իր ձայնով խռպոտ,
 Այսպէս է խօսում Մաշուկին կարօտ:

— Թագուհիդ սիրուն, իմ անգին Մաշուկ,
 Թող ոչ մի ակնարկ և ոչ մի շշուկ
 Տանջանք չ'բերի քո անբիծ սէրին,
 Միայն ճանաչիր քո հլու գերին.

Գերիդ եմ գերիդ, ծերուկս հպարտ,
 Լռին դիտել եմ խաղերդ զւարթ,
 Եւ այսօր այդպէս կայտառ, լուսավառ,
 Սիրտս էլ գերեցիր լոյսերով հազար:

Բիւր տարիներ են իմ գլխով անցել,
 Սիրտս ոչ ոքի առջև չեմ բացել,
 Եւ ոչ մի կրակ, և ոչ մի արև
 Չի հալել ձիւնը մորուքիս ներքև:

Բայց այսօր անգոր քո արևի դէմ,
 Էլ հսկայ անյաղթ քաջ եալբուզը չեմ,
 Թէ որ չ'տանեմ քեզ իմ ուսերին,
 Բարձունքները ջինջ գիրկը ամպերին:

Ամպերի նման քեզ կ'սարուրեմ,
 Իմ կրակ գրկում անուշ կ'օրօրեմ.
 Եւ օրեր կըգան, օրեր կըսանեն,
 Դու զերծ կ'մնաս ահէն ու մահէն:

— Ծերուկ, ինձ միայն սարսափ են բերում
 Մաքերդ դաժան, խօսքերդ երկաթ,
 Թւում է դարուն, դարուն օրերում
 Փայփայած սէրէս պիտ մնամ անջատ:

Հեռացիր ծերուկ, մի՛ նայիր այդպէս,
 Ահով խորշում եմ քո կնճիռներէդ,
 Մահու շնչի պէս անողոր տես,
 Սառ ձիւն ես մաղում անկեանք աչերէդ:

Դու ինքը մահն ես, ինչ սէր ես փնտրում.
 Սէրը գարունքին ծաղկում է, փթթում.
 Խնդուն, լուսազարդ գարունքիս միջին,
 Սէրս պարզել եմ Բեշտաու քաջին:

Ծերուկը լսեց, լսեց ու գնաց.
 Գալարւեց ներսում կիրքը ուշացած,
 Դեռ երէկ ծնած Բեշտաու քաջին
 Սնվեհեր կանգնած տեսաւ առաջին:

Եւ անդնդախոր ու կնճռոտ հոգին
Այսպէս որոտաց ձայնով մոլեգին:

—Ու թող կատարւի վճիռս անխախտ.
Արեւածագին քաջերովս անյաղթ
Պիտի տես երթամ Բեշտաու քաջին,
Երբ տարւած լինի երազով վերջին:

Ու պիտի փշրեմ ճակատը հպարտ,
Որ վառեց ներսս այսքան կիրք ու խանդ.
Իմ չար վրէժից չի փախել ոչ ոք.
Պիտի ջախջախեմ, փշրեմ անողոր:

—

Անդորր գիշեր էր վառ, աստեղազարդ.
Յուշիկ նիրհում էր ծով, ալիք ու արտ.
Եւ այդ մեղկութեան անդորրի միջին,
Մեղմ փայփայում էր Մաշուկն իր քաջին:

Անուշ փափսում խօսքեր սիրավառ,
Պատմում սարսափներ, գալիքներ հազար,
Խնդրում, աղերսում, փախչել, հեռանալ,
Աշխարհներ օտար ու յետ չը դառնալ.
—Գիտեմ, ես գիտեմ, ծեր Եալբուղը չար,
Պիտի խորտակէ մեր սէրն անսպառ,
Կարօտի գետեր պիտ հոսեցընէ,
Արիւն արցունքով սրտերս լցնէ:

Գնանք հեռանանք իմ արեւընկեր,
Իմ անգին մանչուկ, իմ անուշ ախպէր,
Գնանք, չ'ուշանանք պիտի իմանաս
Որ կարճատև է մեր սէրը անհաս...
Եթէ իմանաս, եթէ հաւատաս,
Դու կանգ չես առնի, դու կ'գաս, կ'գաս:

—Իմ արև— աղջիկ, իմ սիրուն Մաշուկ,
Քեզ ի՞նչ պատահեց, տես ոչ մի շշուկ,
Ոչ մի սօսափիւն անդորր զիշերին,
Վտանդ չի բերում մեր անուշ սէրին:

Էլ չե՞ս հաւատում կուռ բազուկներին,
Հաստ պարանոցիս ու լայն թիկունքիս,
Գիացիր որ անշուշտ չար մահ պիտ գտնի,
Ով որ խիզախի և իմ դէմ ելնի:

Գիշերը անդորր սահում է սակայն,
Թաղիւր, մոռացիւր, մտքերդ ունայն,
Քո լաւ մանչուկին եկ մեղմիւ զրկիւր,
Ու գնահ քնիւր, ու գնահ քնիւր:

Եւ լուսաբացին երբ զարթնես նազով,
Քեզ լուր կ'ըբերի մեր հովիկը զով,
Շուտով կ'պատմի քո խենթ սրտիկին,
Որ կարօտ է քեզ քո սէրը կրկին:

Արեւածագին Բեշտաուն արբած,
Մաշուկի անուշ սիրով համակւած,
Մեղմ օրհներգում էր կեանքը սիրավառ,
Լուսերես ժպտում արեւին պայծառ,
Երբ մռայլ, խոժոռ, յայտնեց յանկարծ
Նալբուզը անյոյս սիրուց խենթացած:
Նրա աչքերից արիւն էր կաթում,
Խօսքերը երկաթ մուրճի պէս լմնում:

—Լսիւր, պատանի, սկսեց դանդաղ
Իր մահասարսուռ ձայնովը խաղաղ:

Եթէ արեւ թանկ է քեզ համար,
 Թանկ է արիւնդ, աշխարհը արար,
 Յետ կանգնիր իսկոյն Մաշուկի սէրից,
 Պահիր գլուխդ իմ բազուկներից:

Գիացիր ինձ համար, օրէնք ու աշխարհ
 Իմ մի հարւածի հետ են հաւասար,
 Պահիր, խնայիր հասակդ հպարտ,
 Գալիք օրերիդ ծաղկունքը զւարթ:

Մաշուկը իմն է, իմն էլ պիտ լինի.
 Իր ծնած օրից սիրել եմ գաղտնի,
 Ամեն հասակին տւել եմ գորով,
 Անբիծ արբունքին սպասել սիրով:

Մեղք ես, պատանի, կեանքդ խնայիր,
 Մաշուկին սիրել էլ մի երազիր,
 Այսօրւանից յետ իմ հսկայ լանջին,
 Խաղաղ պիտ հանգչի քո սէրն առաջին:

— Ծերուկ, անդօր են խօսքերդ ունայն,
 Մի օրէնք գիտէ աշխարհը միայն,
 Եւ ոչ մի արիւն և ոչ մի հարւած,
 Մեր ջահել սէրին չի լինի յաղթած:

Մաշուկը երբէք քեզ սէր չի բերի,
 Քո սառը լանջին հուրն էլ կ'մարի,
 Քեզ խորտակել է ոճիրն օրերի,
 Իմ հանդէպ թշւառ գերի ես, գերի:

— Ուրեմն ըմբոստ, ըմբոստ պատանի,
 Թո՛ղ մուրճ-բազուկըս էլ չ'տատանի,
 Ասաց Եալբուղը և մի հարւածով
 Քաջի գլուխը փշրեց հինգ տեղով:

Քեշտառու կոչւեց քաջը յաղթըւած
 Հինգճեղ գազաթով մնաց քարացած.
 Տեղ տեղ ճօճում են կանաչ անտառներ.
 — Սիրոյ յոյգերն են անկատար, երեր:

Ու նրա դիմաց Մաշուկը անլաց,
 Ոտից մինչ գլուխ կանաչ հագնւած,
 Բիւր անտառներով շրջում է անուշ,
 Անվերջ թափթփում սէր, կարօտ ու յուշ:

Եալըուզը սակայն սևերես, մռայլ,
 Միշտ մշուշապատ, անարև, անփայլ,
 Մահաշունչ հոգով դարերէ 'ի վեր,
 Մնում է անսէր, մնում է անսէր...

0000000000



Յ Ա Ն Կ

1. Հոգիս	հր.	7.
2. Անուշ հղբայրներ		8.
3. Հոգի հոգի լինէի		9.
4. Ո՞վ ես դու		10.
5. Սիրիւ ինձ անդարձ		11.
6. Դու մի վարդ ես նուրբ		12.
7. Դու մի արև		13.
8. Հովի թևի հետ		14.
9. Ես աղօթում եմ նորէն ու նորէն		15.
10. Կարօտ		16.
11. Աշխարհն այսօր		17.
12. Աշուն		18.
13. Նորից մի կարօտ		19.
14. Մի օր տեսայ		20.
15. Մէկն ինձ ասաց		21.
16. Մենք դարիւր անցորդ		22.
17. Նորից նւագի		23.
18. Երկիրն է նիրհում		24.
19. Թախիծ		25.
20. Գարնան մրմունջներ		26.
21. Յոյսը		27.
22. Տարէք հողմեր		28.
23. Այն մի երազ էր		29.
24. Բանաստեղծի սիրտը		30.
25. Իմ սէրը		31.

26. Երկինքը ջինջ	հր.	32.
27. Հողիս վայելից		33.
28. Միշտ զգում եմ ես		34.
29. Ծովն էլ ինձ հթեր		35.
30. Իմ մանկութիւնը		36.
31. Մոռացումի երգերից		37.
32. Ո՞վ ես ասա		39.
33. Մահի հանդէպ		41.
34. Սիրտս խոնարհ, հողիս խռով		42.
35. Խորտակած սէր		43.
36. Յաւից անգոր		44.
37. Սիրում եմ երբ նստում ես ինձ մօտ		45.
38. Ինձ մի հարցնէք		46.
39. Յուշեր միայն		48.
40. Մի թունաւորիւր		49.
41. Անծանօթ ախպէր		51.
42. Մենութեան երգերից		52.
43. Տուր, անցիր, մոռացիր		53.
44. Օրօրօցի երգը		54.
45. Ունայնութիւն		56.
46. Վերաւոր եղնիկ		57.
47. Թող ախպէր		58.
48. Մահի օրօրը		59.
49. Խելագարը		61.
50. Էլ մի ափսոսա		63.
51. Գիշերի երգը		64.
52 Բէշտառու (լէզնիկ)		65.



Тифлиси
Книжный магазинъ „Гиръ“.

50 қ.

9

ՀՀ Ազգային գրադարան



NL0367119

58.806